ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2025.3-30

Անժելա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ մագիստրանտ

2024 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Կառավարում» մասնագիտությամբ, ապա ընդունվել մագիստրատուրա՝ «Մաքսային վարչարարություն» կրթական ծրագրով:

2023 թվականից աշխատում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Առևտրային վարկավորման վարչությունում:

Ակտիվ կամավորական գործունեություն է ծավալում տարբեր հասարակական և բարեգործական կազմակերպություններում:

https://orcid.org/0009-0009-3677-0158

Աշխատաշուկայի արդյունավետ գործունեությունը յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնարար պայմաններից է: Դա ոչ միայն արտացոլում է տնտեսական աճի տեմպերը, այլև ձևավորում է բնակչության կենսամակարդակի բարելավման և սոցիալական կայունության հիմնական նախադրյալները:

Հայաստանի Հանրապետության աշխատաշուկան վերջին տասնամյակում բարդ ու բազմաշերտ զարգացումների միջով է անցել, և ժողովրդագրական փոփոխությունները, միգրացիոն հոսքերը, համաշխարհային տնտեսական անորոշություններն ու COVID-19 համավարակի հետևանքները զգալի ազդեցություն են թողել աշխատուժի կառուցվածքի, զբաղվածության մակարդակի և սոցիալական ներառման վրա:

Հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի աշխատաշուկայի հիմնական միտումները վերջին ժամանակաշրջանում՝ առանձնացնելով այն կառուցվածքային գործոնները, որոնք սահմանում են ոլորտի ներկայիս վիճակը: Հոդվածում ներկայացված են պետական ծրագրերի արդյունավետության դիտարկումներ և առաջարկություններ՝ ուղղված աշխատաշուկայի կայունացմանն ու սոցիալ-տնտեսական ներառման ընդլայնմանը:

Հիմնաբառեր. *աշխատաշուկա, զբաղվածություն, աշխատուժ, զբաղվածության պետական քաղաքականություն*

Բնակչության զբաղվածությունը տնտեսության վիճակի և պետական կառավարման արդյունավետության գնահատման կարևորագույն մակրոտնտեսական ցուցանիշներից է:

Զբաղվածությունը, որպես տնտեսական կատեգորիա

և սոցիալական երևույթ, կրում է դասակարգային և պատմական բնույթ: Դա գոյություն է ունեցել բոլոր ժամանակներում, փոխվել են միայն դրա մոդելներն ու ձևերը: Զբաղվածության և գործազրկության խնդիրները, որոնք ունեն սոցիալական բնույթ, պետության համար միշտ եղել և մնում են որպես ամենակարևորն և հրատապը:

Զբաղվածության վիճակագրության ուսումնասիրումը պատկերացում է տալիս երկրում աշխատաշուկայի շարժընթացի մասին և կառավարման մարմիններին օգնում է հասկանալ աշխատուժի կառուցվածքը, ներառյալ զբաղվածության բաշխումը տարբեր ոլորտների և ժողովրդագրական խմբերի միջև:

Հետևելով զբաղվածության միտումներին՝ պետական մարմինները կարող են ժամանակին միջոցներ ձեռնարկել տնտեսական անկումների բացասական հետևանքները մեղմելու և աճի հնարավորությունները օգտագործելու համար:

Վերոնշյալ պատճառներից ելնելով, նախևառաջ, հարկ ենք համարում հակիրճ անդրադարձ կատարել ՀՀ զբաղվածության ոլորտի վերջին տարիների վիճակագրությանը:

ՀՀ զբաղվածության վիճակագրության ուսումնասիրությունը նպատակահարմար է սկսել աշխատուժի թվի վերլուծությունից, քանի որ դա է աշխատաշուկայի չափման հիմնական միավորը: Աշխատուժը ներառում է տնտեսապես ակտիվ բնակչությանը, այն անձանց, որոնք ունակ և պատրաստ են մասնակցելու աշխատանքային գործունեության՝ լինեն նրանք զբաղվածներ կամ գործազուրկներ:

2014–2016 թվականներին աշխատուժի թվաքանակը նվազել է շուրջ 10.9%-ով՝ հիմնականում արտագաղթի աճի, ժողովրդագրական ցուցանիշների անկման և տնտեսական անորոշության հետևանքով: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ նույն ժամանակահատվածում բնակչության թիվը տարեկան նվազել է շուրջ 30-40 հազարով, իսկ միգրացիոն բացասական հաշվեկշիռը եղել է գերիշխող գործոն: Մասնավորապես՝ 2015 թվականին ՀՀ-ից մեկնածների թիվը գերազանցում էր վերադարձողների թիվը մոտ 26 հազարով[1]: Այս տարիներին աշխատունակ տարիքի բնակչության համամասնությունը նվազում էր՝ պայմանավորված նախորդ տասնամյակում ծնելիության անկմամբ: Այս ժամանակաշրջանում ՀՀ-ում տնտեսական



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Աշխատուժի թվաքանակը ՀՀ-ում, 2014-2023 թթ. (հազ. մարդ)[2]

[1] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ: Բնակչություն և սոցիալական գործընթացներ: Բնակչություն: Հայաստանի Հանրապետության ժամանումներն ու մեկնումներն ըստ ցուցանիշների և ըստ տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__28%20Population/PS-pp-13-2021.px/table/tableViewLayout1/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb:

[2] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ: Բնակչություն և սոցիալական գործընթացներ: Զբաղվածություն և գործազրկություն: Աշխատուժն ըստ ցուցանիշների և տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-11-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Զբաղվածության մակարդակը ՀՀ-ում, 2014-2023 թթ.[3]

Տարի	Աշխատուժ (հազ.)	Զբաղվածներ (հազ.)	Զբաղվածության մակարդակ (%)
2014	1,375.70	1,133.50	**82.40%**
2015	1,316.40	1,072.60	**81.50%**
2016	1,226.30	1,006.20	**82.00%**
2017	1,230.70	1,011.70	**82.20%**
2018	1,293.80	1,048.50	**81.00%**
2019	1,318.10	1,077.40	**81.70%**
2020	1,286.70	1,052.40	**81.80%**
2021	1,287.30	1,088.30	**84.50%**
2022	1,311.30	1,134.80	**86.50%**
2023	1,341.20	1,174.40	**87.60%**

աճը շատ թույլ էր. օրինակ՝ 2016-ին դա կազմել է ընդամենը 0.2%[4]:

2017–2019 թվականներին արձանագրվել է աճ՝ մոտ 7.1%, որի պատճառներից են ներքին կայունացումը, ներդրումների և զբաղվածության ծրագրերի ակտիվացումը: 2017-ից հետո նկատվել է արտաքին ներդրումների աշխուժացում, այդ թվում՝ ՏՏ,զբոսաշրջության, շինարարության և սպասարկման ոլորտներում: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ուղղակի օտարերկրյա ներդրումները 2018–2019 թթ. զգալիորեն աճել են որոշ ոլորտներում, օրինակ՝ ֆինանսներ, հեռահաղորդակցություն[5]: Տնտեսության այս ակտիվացումն էլ հենց աշխատուժի ներգրավման խթան է հանդիսացել[6]:

2020-ին աշխատուժը նորից նվազել է՝ -2.38%՝ կապված COVID-19 համավարակի հետ: 2021-ից սկսած՝ նկատվում է կայուն աճ՝ պայմանավորված տնտեսության վերագործարկմամբ, ներգաղթի որոշակի աճով (օրինակ՝ Ռուսաստանից և Ուկրաինայից), ինչպես նաև զբաղվածության պետական և միջազգային ծրագրերի ակտիվացմամբ: Աշխատուժի կազմում զբաղվածների թվաքանակի շարժընթացն ունի գրեթե նույն միտումները, ինչ աշխատուժի դեպքում, սակայն զբաղվածության ցուցանիշի պարագայում հետհամաճարակային շրջանի կայունացումն ու աճն ավելի արտահայտված են:

Աշխատուժի և զբաղվածության տվյալների համադրմամբ 2014–2020 թվականներին նկատվում է զբաղվածության համեմատաբար կայուն մակարդակ՝ միջինում շուրջ 81-82%: Այս տարիներին, չնայած աշխատուժի և զբաղված անձանց թվաքանակի որոշակի անկումներին և տատանումներին, հարաբերական զբաղվածության ցուցանիշը պահպանել է կայուն բնույթ, ինչը նշանակում է, որ աշխատուժից դուրս եկող և զբաղվածություն չունեցող անձանց հարաբերակցությունը մնացել է մոտավորապես հավասարակշռված:

2021 թվականից սկսած՝ գրանցվել է նկատելի աճ. զբաղվածության մակարդակը բարձրացել է 84.5%-ից մինչև 87.6%:

Անդրադառնանք նաև ՀՀ-ում զբաղվածության ցուցանիշին՝ ըստ առաձին փոփոխականների:

Տղամարդկանց զբաղվածության թվաքանակի զգալի անկումը 2014-2016 թթ. կարելի է կապել արտագաղթի աճի և ար-

[3] Աղյուսակը կազմել է հեղինակը, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

[4] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ minfin.am: Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն:

[5] Աղբյուրը՝ Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն: Օտարերկրյա ուղղակի ներդրումների կրճատումը և ակնկալվող ազդեցությունը, հեղ. RCSP, 25-ը հունիսի, 2025 թ.:

[6] 2018 թվականին վերաբերող տվյալները ներկայացված են *-ով: Մեթոդաբանության մանրամասները՝ տողատակի ծանոթագրություններ բաժնում, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-11-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Զբաղվածների թվաքանակը ՀՀ-ում՝ ըստ սեռի, 2014-2023 թթ. (հազ. մարդ)[7]

դյունաբերական ճյուղերի պասիվացման հետ, երբ հիմնականում տղամարդիկ են աշխատել: 2017-2019 թվականներին նկատվող վերականգնումը պայմանավորված է եղել շինարարության, արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում ակտիվության աճով: 2020-ին համավարակի հետևանքով զգալի անկում է գրանցվել, սակայն 2021-2023 թթ. տղամարդկանց աշխատաշուկայի արագ վերականգնումը ցույց է տալիս վերականգնման ուժեղ ներուժ՝ նաև ներգաղթային հոսքերի ազդեցությամբ:

Կանանց զբաղվածության ավելի խոր անկումն 2014-2018 թթ. կարելի է բացատրել գյուղատնտեսության անկումով և ընտանեկան բեռի մեծությամբ, որոնք սահմանափակել են կանանց ակտիվ մասնակցությունն աշխատաշուկային: 2019 թվականից արձանագրվող դանդաղ աճը վկայում է կրթության և սոցիալական աջակցության ծրագրերի ազդեցության մասին, ինչը նպաստում է կանանց ավելի լայն ընդգրկմանը տնտեսական գործունեության մեջ, հատկապես ծառայությունների ոլորտում: Այնուամենայնիվ, կանանց զբաղվածությունն ունի աճի ավելի պասիվ շարժընթաց՝ արտացոլելով դեռևս առկա խոչընդոտներն աշխատանքային շուկայում:

Ինչը վերաբերում է կանանց և տղամարդկանց զբաղվածության թվաքանակի միջև առկա խզվածքին, ապա ուսումնասիրվող ժամանակահատվածում դա դեռևս շարունակում է մնալ արտահայտված՝ արտացոլելով ՀՀ աշխատաշուկայում առկա գենդերային որոշակի անհավասարությունը:

Staff.am-ի «ՀՀ աշխատաշուկա-2024» վերլուծության համաձայն՝ 2024 թ. կանանց և տղամարդկանց աշխատավարձերի աճը գրեթե նույն մակարդակում է եղել: Նշվում է, որ 2023 թ. կանանց աշխատավարձն աճել է 12%-ով, իսկ տղամարդկանցը՝ 17%-ով, սակայն 2024 թ. իրավիճակը մի փոքր փոխվել է:

Այնուամենայնիվ, ամենաբարձր վճարվող ոլորտներում տղամարդկանց աշխատավարձը զգալիորեն բարձր է կանանց աշխատավարձից: Տարբերությունն ամենացայտուն կերպով արտահայտված է ֆինանսական ոլորտում՝ մոտ 66%: Տեղեկատվական տեխնոլոգիաների ու կապի ոլորտում տարբերությունը 40.7% է, իսկ հանքարդյունաբերության ոլորտում՝ 30%:

Վերլուծության համաձայն՝ վերոնշյալ տարբերությունը կարող է պայմանավոր-

[7] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ: Բնակչություն և սոցիալական գործընթացներ: Զբաղվածություն և գործազրկություն: Զբաղվածությունն ըստ ցուցանիշների և տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-13-2023.px/table/tableViewLayout1/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Զբաղվածների թվաքանակը ՀՀ-ում՝ ըստ տարիքային խմբերի, 2014-2023 թթ. (հազ. մարդ)[8]

ված լինել այն հանգամանքով, որ այս ոլորտներում ամենաբարձր վարձատրվող հաստիքները (տնօրեն, դեպարտամենտի տնօրեն, բարձր օղակի ղեկավար և այլն) հիմնականում զբաղեցնում են տղամարդիկ[9]:

2014–2023 թվականների ընթացքում ՀՀ աշխատաշուկան, ըստ տարիքային խմբերի, ձևավորել է զբաղվածության չափազանց բևեռացված շարժընթաց, ինչը վկայում է կառուցվածքային բնույթի խնդիրների առկայության մասին: Մասնավորապես՝ երիտասարդ տարիքային խմբերում արձանագրվել է զբաղվածության զգալի նվազում. 20–24 տարեկանների խմբում ուսումնասիրվող ժամանակահատվածում զբաղվածների թիվը նվազել է շուրջ 21.1%-ով (88.9 հազարից հասնելով մինչև 70.2 հազարի), իսկ 25–29 տարեկանների խմբում՝ 16.3%-ով (131.5 հազարից հասնելով մինչև 110.1 հազարի): Նվազման միտումը պայմանավորված է կրթական համակարգում երկարատև ներգրավվածությամբ, ինչպես նաև միգրացիոն արտահոսքով և երիտասարդների շրջանում աշխատաշուկայի մուտքի դժվարություններով:

Փոխարենը՝ աշխատաշուկայում դիտվել է տարեց բնակչության ակտիվության աճ. մասնավորապես՝ 60–64 տարեկանների խմբում ուսումնասիրվող ժամանակահատվածում զբաղվածությունն աճել է 43%-ով, իսկ 65–69 տարիքային խմբում՝ 56.3%-ով: Ավելին, նույնիսկ 70–75 տարեկանների շրջանում նկատվել է զբաղվածության աճ՝ շուրջ 6.5% (24.7 հազարից հասնելով մինչև 26.3 հազարի): Այս միտումները ցույց են տալիս, որ կենսաթոշակային համակարգը չի ապահովում բավարար եկամուտներ, ինչն էլ ստիպում է տարեց մարդկանց հարկադրաբար պահպանել իրենց աշխատանքային ակտիվությունը:

Մեր օրերում կարևոր է նաև զբաղվածների կազմում հաշմանդամների թվաքանակի վիճակագրության ուսումնասիրումը, որպեսզի գնահատվի նրանց ներառվածության աստիճանն աշխատաշուկայում, բացահայտվեն խոչընդոտները, և մշակվի արդյունավետ քաղաքականություն: Ներկայում զբաղվածության բարձր մակարդակ ունեցող շատ երկրներում հաշմանդամ անձանց ներգրավվածությունը զբաղվածների կազմում կարևոր հիմնահարցերից է: Օրինակ՝ Կանադայում և Նի-

[8] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ: Բնակչություն և սոցիալական գործընթացներ: Զբաղվածություն և գործազրկություն: Զբաղվածությունն ըստ ցուցանիշների և տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-13-2023.px/table/tableViewLayout1/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

[9] «ՀՀ աշխատաշուկա 2024», staff.am-ի ամենամյա զեկույց, staffmedia.am, դեկտեմբերի 27, 2024 թ.:

դերլանդներում հաշմանդամների համար գործում են հատուկ ծրագրեր: Կանադայի «Canada Disability Benefit» ծրագիրը 18-64 տարեկան հաշմանդամ անձանց տրամադրում է մոտ 200 ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական աջակցություն[10], իսկ «Opportunities Fund»-ը հնարավորություն է տալիս նրանց ձեռք բերելու նոր հմտություններ[11]: Նիդերլանդներում «Inclusive Technology Subsidy for SMEs» ծրագիրը փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվում է սուբսիդիա՝ ներառական տեխնոլոգիաներ ներդնելու համար, որոնք աջակցում են հաշմանդամություն ունեցող աշխատակիցներին[12]:

Այս ծրագրերը ցույց են տալիս, որ նպատակային քաղաքականությունը կարող է էապես բարելավել հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածության մակարդակն աշխատանքի շուկայում:

Տվյալները ցույց են տալիս, որ 2014-2023 թվականների ընթացքում Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մակարդակը տատանվել է 38.3%–ից մինչև 53.9%՝ ցուցաբերելով ընդհանուր անկման միտում: Սա վկայում է հատուկ մշակված ներառական քաղաքականության և կառույցների խիստ անհրաժեշտության մասին: Այս խմբի ներուժի ակտիվացումը կարևոր է ինչպես սոցիալական արդարության, այնպես էլ տնտեսական աճի ապահովման համար:

Իսկ ինչը վերաբերում է ոլորտային դասակարգմանը, ապա «ՀՀ աշխատաշուկա-2024» վերլուծության համաձայն՝ Հայաստանում ամենապահանջված մասնագիտությունների առաջատար հնգյակը հետևյալն է՝

- բանկային/վարկային գործ,
- վաճառքի/սպասարկման կազմակերպում,
- ծրագրավորում,
- մարքեթինգ/գովազդ,
- ադմինիստրատիվ/օֆիսային:

Մարզերի պարագայում ևս, ամենապահանջվածը բանկային/վարկային գործն է, իսկ երկրորդ տեղում՝ վաճառքի/սպասարկման կազմակերպումը: Հաջորդիվ պատկերը մի փոքր այլ է՝

- կրթություն,
- ադմինիստրատիվ/օֆիսային,
- հաշվապահություն:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Հաշմանդամություն ունեցող զբաղվածների թվաքանակը ՀՀ-ում, 2014-2023 թթ. (հազ. մարդ)[13]

[10] "Canada Disability Benefit", Government of Canada, 17/07/2025. https://www.canada.ca/en/services/benefits/disability/canada-disability-benefit.html

[11] "Opportunities Fund for Persons with Disabilities", Government of Canada, 14/07/2025. https://www.canada.ca/en/employment-social-development/programs/opportunity-fund-disability.html

[12] "Inclusive technology subsidy for SMEs", Netherlands Enterprise Agency, RVO. https://business.gov.nl/subsidy/inclusive-technology-sme/

[13] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ: Բնակչություն և սոցիալական գործընթացներ: Զբաղվածություն և գործազրկություն: Զբաղվածությունն ըստ ցուցանիշների և տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-13-2023.px/table/tableViewLayout1/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb:

Արձանագրվել է նաև, որ ներկայումս գործատուները կարևորում են ոչ միայն աշխատակիցների ստացած մասնագիտական կրթությունը, այլև soft (փափուկ) հմտությունները: Դրանց շարքում մեծ տեղ են հատկացնում ժամանակի կառավարման, բանակցություններ վարելու հմտություններին, թիմում աշխատելու ունակությանը:

Ամփոփելով վիճակագրական տվյալների վերլուծությունը՝ կարող ենք ասել, որ ՀՀ զբաղվածության ոլորտում առկա են մի շարք կառուցվածքային խնդիրներ, ինչպիսիք են երիտասարդ տարիքի բնակչության և հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ցածր մակարդակը, զբաղվածների կազմում գենդերային անհավասարությունը:

Առկա հիմնախնդիրների լուծման ուղիներ գտնելու համար ուսումնասիրենք նաև ոլորտում վարվող պետական քաղաքականությունը:

ՀՀ կառավարության հերթական նիստերից մեկի ժամանակ ներկայացվել են 2025 թվականին իրականացված և ակնկալվող միջոցառումները, որոնցից է նաև անհուսալի վարկային պատմություն ունեցող ֆիզիկական անձանց տնտեսական ակտիվացման նպատակով ՀՀ կառավարության նախաձեռնած աջակցության ծրագիրը: Այդ նպատակով նախատեսվում է հատկացնել 205 միլիոն ՀՀ դրամ՝ 2025 թվականի պետական բյուջեից:

Ծրագիրը միտված է այն քաղաքացիների աջակցությանը, որոնց վարկային բոլոր պարտավորությունները վերջին երեք և ավելի տարիների ընթացքում դասակարգվել են որպես «անհուսալի», իսկ մայր գումարի ընդհանուր չափը չի գերազանցում մեկ միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը: Նշված ծրագրի շրջանակում շահառուները ստանում են ֆինանսական աջակցություն՝ իրենց եկամտային հարկի ամբողջ չափով: Այդ գումարն ուղղվում է անհուսալի վարկերի մարմանը՝ առավելագույնը 24 ամսվա ընթացքում՝ սկսած շահառու ճանաչվելու հաջորդ ամսվա 1-ից: Աջակցության տրամադրումն ավարտվում է վարկային պարտավորությունների ամբողջական մարումից, որոշմամբ սահմանված այլ հիմքով դադարեցումից կամ օրենքով նախատեսված կարգով պարտավորության դադարեցումից հետո:

Ծրագրի հիմնավորման մեջ ներկայացված տվյալների համաձայն՝ 2025 թ. փետրվարի դիմումների հիման վրա շահառու են ճանաչվել 1896 քաղաքացիներ, որոնց վարկերի մարումը ֆինանսավորվել է շուրջ 70,625,000 ՀՀ դրամով: Մարտին այդ ցուցանիշը կազմել է 2295 անձ և 86,420,000 դրամ, իսկ ապրիլին՝ 2866 շահառու և շուրջ 103,207,000 դրամ ֆինանսավորում: Առավել թարմ տվյալներ դեռևս հրապարակված չեն, սակայն առկա վիճակագրությունը վկայում է ծրագրի պահանջարկի աճի և դրա սոցիալ-տնտեսական նշանակության մասին:

Բացի վարկային աջակցությունից, կառավարությունը նախաձեռնել է նաև մի շարք միջոցառումներ՝ ուղղված աշխատունակ, սակայն սոցիալապես անապահով անձանց զբաղվածության խթանմանը: Մասնավորապես՝ «Անապահովության գնահատման համակարգով անապահով ճանաչված ընտանիքների աշխատունակ անդամների վարձատրվող հասարակական աշխատանքի դիմաց աջակցության տրամադրում» ծրագիրը նպատակ ունի բարձրացնելու աշխատաշուկա մուտք գործելու հնարավորությունները, փոխելու աշխատանք ունենալու հանդեպ հասարակական վերաբերմունքը, ինչպես նաև նպաստելու համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը:

Ծրագրի շրջանակում գործատուն աշխատակիցների հետ կնքում է աշխատանքային պայմանագիր և յուրաքանչյուր օր աշխատողի աշխատանքի դիմաց ստանում է 3500 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ սոցիալական վճարը: Ծրագրի ամբողջական իրականացման համար պահանջվում է շուրջ 128,625,000 դրամ ֆինանսավորում:

ՀՀ կառավարությունը նախատեսում է նաև ուսուցման և աշխատանքային ինտեգրման կարճաժամկետ ծրագրեր՝ սոցիալապես անապահով անձանց համար: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը փո-

փոխություններ և լրացումներ է կատարել 2025 թվականի պետական բյուջեի վերաբաշխման շրջանակում, որպեսզի ամրապնդի սոցիալապես անապահով խմբերի զբաղվածության խթանման ծրագրերը: Մասնավորապես՝ «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» ծրագրի բյուջեից 197,350,000 դրամ նախատեսվում է ուղղել նոր միջոցառման իրականացմանը, որի նպատակը «Անապահովության գնահատման համակարգով» անապահով ճանաչված ընտանիքների աշխատունակ անդամների համար մասնագիտական վերապատրաստման, աշխատանքային փորձի ձեռքբերման և հետագա զբաղվածության ապահովումն է: Շահառուների մասնագիտական կարողությունների զարգացմամբ փորձ է արվելու հիմք ստեղծել նրանց՝ գործատուների կողմից առաջարկվող թափուր աշխատատեղերում կայուն զբաղվածության համար: Հատկապես կարևորվում է համապատասխան հմտությունների ձևավորումը՝ ուղղված գործատուների կողմից ներկայացվող կոնկրետ պահանջներին: Այս մոտեցումը միտված է ոչ միայն կարճաժամկետ զբաղվածության ապահովմանը, այլև աշխատաշուկայում շահառուների երկարաժամկետ ինտեգրմանը:

Ծրագրով նախատեսված են զբաղվածության ապահովման հետևյալ երեք հիմնական կառուցակարգերը.

- մասնագիտական ուսուցում և աշխատանքի տեղավորում,
- աշխատանքային փորձի ձեռքբերում և հետագա զբաղվածության ապահովում,
- ուղղակի աշխատանքի տեղավորում՝ գործատուին մասնակի փոխհատուցման տրամադրման եղանակով:

Այս միջոցառման շրջանակում 2025 թվականին նախատեսվում է ընդգրկել շուրջ 400 շահառուի, որի համար պահանջվող ֆինանսական միջոցների ընդհանուր չափը 197,350,000 դրամ է: Օրակարգում հատկապես ընդգծվում են ծրագրի նպատակային խմբի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը, աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ մասնագիտական վերապատրաստման համակարգի ձևավորումը և խոցելի խմբերի տնտեսական ակտիվացման նոր հնարավորությունների ստեղծումը՝ պետական աջակցությամբ[14]:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացնում է զբաղվածության խթանմանը միտված այլ ծրագրեր ևս:

«Զբաղվածության ապահովման ծրագիր՝ պատերազմի մասնակիցների համար»-ի նպատակն է Ադրբեջանի կողմից 2016, 2020 և 2022 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց, ինչպես նաև 2020 թվականից հետո ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ քաղաքացիների համար կազմակերպել մասնագիտական ուսուցում, ինչպես նաև աշխատանքային փորձառություն՝ ձեռք բերելու համապատասխան հմտություններ: Այդ ամենից հետո շահառուներն աշխատանքի ընդունվելու հնարավորություն կունենան:

Սույն ծրագրի շրջանակներում գործատուն իրավասություն ունի որոշելու, թե իրեն դիմած քաղաքացին ծրագրի որ բաղադրիչի շահառու կարող է դառնալ:

Դրանով պայմանավորված՝ ծրագիրն ունի 3 բաղադրիչ:

Առաջին բաղադրիչի դեպքում կազմակերպվում է շահառուի մասնագիտական ուսուցումը, որը կարող է տևել մինչև 5 ամիս: Այս դեպքում պետության կողմից շահառուին տրամադրվում է.

1. ուսման վարձ՝ ամսական 50,000 դրամի չափով,
2. կրթաթոշակ՝ նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ի չափով (37,500 դրամ):

Պետությունը գործատուին տրամադրում է հարկերի փոխհատուցում՝ մեկ տարի-ժամկետով, ամսական կտրվածքով՝ առա-

[14] «Կձևավորվի կրթություն-բիզնես համագործակցության համապարփակ և հնարավորություն ընձեռող շրջանակ», ՀՀ կառավարություն, 24.07.2025 թ., https://www.gov.am/am/news/item/16150/

վելագույնը 50,000 դրամի չափով:

Երկրորդ բաղադրիչի շրջանակներում շահառուն գործատուի մոտ մասնակցում է աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացին, որը կարող է տևել մինչև երեք ամիս: Այս դեպքում գործատուի և շահառուի միջև կնքվում է աշխատանքային պայմանագիր՝ առնվազն մեկ տարի ժամկետով, որի ընթացքում պետությունը գործատուին տրամադրում է.

1. շահառուին վճարվող աշխատավարձը՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով,
2. շահառուի աշխատավարձից հաշվարկվող հարկային և սոցիալական վճարները՝ ամսական առավելագույնը 25,000 դրամի չափով՝ առաջին 3 ամսում, ամսական առավելագույնը 50,000 դրամի չափով՝ հաջորդ 9 ամիսներին:

Երրորդ բաղադրիչի դեպքում պետությունը շահառուի հետ առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու պարագայում 300,000 դրամի չափով միանվագ փոխհատուցում է տրամադրում գործատուին[15]:

Հաջորդը «ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության ապահովման պետական աջակցության ծրագիրն» է, որը բաղկացած է երեք բաղադրիչից:

1. ***Մասնագիտական ուսուցում և աշխատանքի տեղավորում***

Այս ծրագրի շրջանակում պետք է կազմակերպվի շահառուի մասնագիտական ուսուցման գործընթաց՝ մինչև 6 ամիս ժամկետով: Ուսուցումն ավարտելուց հետո գործատուի ու շահառուի միջև պետք է կնքվի աշխատանքային պայմանագիր՝ առնվազն 3 ամիս ժամկետով:

2. ***Աշխատանքային փորձի ձեռքբերում և աշխատանքի տեղավորում***

Այս բաղադրիչի շրջանակում առնվազն 6 ամիս ժամկետով պետք է կնքվի աշխատանքային պայմանագիր գործատուի և աշխատողի միջև:

3. ***Մասնագիտական ուսուցում, աշխատանքային փորձի ձեռքբերում և աշխատանքի տեղավորում***

Այս բաղադրիչի շրջանակում մինչև 6 ամիս ժամկետով պետք է կազմակերպվի շահառուի մասնագիտական ուսուցման գործընթացը, որի ավարտից հետո գործատուի և շահառուի միջև առնվազն 6 ամիս ժամկետով կկնքվի աշխատանքային պայմանագիր:

Վերոնշյալ բաղադրիչների իրագործման համար պետությունը պետք է տրամադրի փոխհատուցումներ (տես աղյուսակ 2):

Գործատուի և շահառուի միջև կնքված

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող փոխհատուցումները

Փոխհատուցման չափը	Ստացող	Տրամադրման նպատակը	Ժամկետը	Կիրառման շրջանակները
Ամսական 50,000 դրամ	Շահառու	Ուսման վարձի փոխհատուցում	3 ամիս	1-ին և 3-րդ բաղադրիչներ
Ամսական 50,000 դրամ	Շահառու	Կրթաթոշակ	3 ամիս	1-ին և 3-րդ բաղադրիչներ
Ամսական առավելագույնը 50,000 դրամ	Գործատու	Շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկի, դրոշմանիշային վճարի և օրենքով սահմանված դեպքերում սոցիալական վճարի փոխհատուցում	3 ամիս	1-ին և 3-րդ բաղադրիչներ
Ամսական 165,000 դրամ	Գործատու	Շահառուի աշխատավարձի փոխհատուցում	3 ամիս	2-րդ և 3-րդ բաղադրիչներ[16]

[15] «Զբաղվածության ապահովման ծրագիր՝ պատերազմի մասնակիցների համար», ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 06.06.2025 թ., https://www.mlsa.am/blockpage/59

[16] Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջ:

աշխատանքային պայմանագիրը մինչև սահմանված ժամկետի լրանալը լուծելու դեպքում գործատուն պարտավորվում է վերադարձնել շահառուի կրթաթոշակի/ուսման վարձի կամ որպես աշխատավարձ վճարված գումարը:

Անդրադառնանք նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված 2022-2024 թվականների պետական բյուջեի կատարման տարեկան վերլուծություններին, որոնց հիման վրա զբաղվածության ոլորտի վերաբերյալ առկա են հետևյալ տվյալները.

• 2022 թվականին ՄՄԾ տարածքային կենտրոնների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 10,362 անձ: Զբաղվածության ապահովման բոլոր պետական ծրագրերում ընդգրկվել է 1,792 շահառու, ընդ որում, 1,178–ը՝ ժամանակավոր բնույթ կրող սեզոնային գյուղատնտեսական աշխատանքների համար: 2022 թվականին զբաղվածության ապահովման պետական ծրագրերում ընդգրկվել է Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած 276, իսկ աշխատանքային փորձի ձեռքբերման ծրագրերում՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող՝ Արցախի Հանրապետության 315 գործազուրկ:

• 2023 թվականի ընթացքում ՄՄԾ տարածքային կենտրոնների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 10878 աշխատանք փնտրող անձ: Իրականացվել են զբաղվածության ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնց, ընդհանուր առմամբ, մասնակցել է 3886 գործազուրկ, ընդ որում, 3155–ը՝ ժամանակավոր բնույթ կրող սեզոնային գյուղատնտեսական աշխատանքների համար: Կազմակերպվել են աշխատանքային փորձի ձեռքբերման, մասնագիտական ուսուցման, ինչպես նաև գործատուին միանվագ աջակցության տրամադրման ճանապարհով աշխատանքի տեղավորման միջոցառումներ պատերազմի մասնակից, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված 526 անձի համար: Իրականացվել են նաև գործազուրկներին աշխատանքի ընդունելու համար գործատուին միանվագ աջակցության տրամադրման միջոցառումներ՝ ևս 191 գործազուրկի աշխատանքի տեղավորման համար:

• 2024 թվականի տվյալները ներկայացված են ինն ամսվա հաշվարկով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ 2024 թվականի ինն ամիսների ընթացքում կատարվել են 17 ծրագրեր, որոնց ուղղվել է 620.5 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրված ցուցանիշի 93%-ը և 22.3%-ով կամ 113.1 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Նշենք, որ նախկինում ՀՀ ՏԿԵՆ պատասխանատվությամբ մեկնարկած «Աջակցություն փախստականների ինտեգրմանը» ծրագրի որոշ միջոցառումներ 2024 թվականին փոխանցվել են ՀՀ ԱՍՀ նախարարությանը: Ծրագրային ցուցանիշից շեղումը և նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ աճը հիմնականում պայմանավորված են կենսաթոշակային ապահովության, ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցության (2023 թվականի ինն ամիսներին նախատեսված չէր), սոցիալական ապահովության և ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրերի ծախսերով:

Վերոնշյալ վերլուծությունների տվյալների համաձայն՝ ուսումնասիրվող բոլոր տարիներին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն առաջատար է իր կողմից իրականացվող ծրագրերի համար հատկացված միջոցների ծավալով, բայց և այնպես, հարկ է նշել, որ հատկացումները, որոնք կատարվել են, առավելապես միտված են եղել սոցիալական խնդիրների լուծմանը (օրինակ՝ անապահով սոցիալական խմբերին աջակցություն, Ժողովրդագրական վիճակի բարելավում, սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում, կենսաթոշակային, սոցիալական ապահովություն, ճգնաժամերի հակազդման և արտակարգ

իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ որոշակի սոցիալական խմբերին տրվող աջակցություն):

Միաժամանակ, պետք է ասել, որ բացակայում են զբաղվածության խթանման հետ կապված ծրագրերի համար կատարվող հատկացումների, ինչպես նաև իրականացված ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տվյալները:

Հիմնելով կատարված վերլուծությունների վրա՝ ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1. Ստեղծել «Առաջին աշխատանքի սուբսիդավորման» պետական ծրագիր, որի շրջանակում պետությունը կպարտավորվի մեկ տարվա ընթացքում գործատուին հատկացնել երիտասարդ աշխատողի աշխատավարձի մի մասը՝ առնվազն 50%-ի չափով: Սա կշահագրգռի գործատուներին, որպեսզի աշխատանքի ընդունեն երիտասարդ կադրերի:
2. Բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար ներդնել պարտադիր 6-ամսյա մասնագիտական փորձառության համակարգ՝ հիմնված կրթական հաստատությունների և գործատուների փոխգործակցության վրա: Սա կխթանի երիտասարդներին սովորել, ինչպես նաև ինքնադրսևորվել՝ հետագայում աշխատանքի առաջարկ ստանալու ակնկալիքով:
3. Տարածքային համայնքներում (հատկապես մարզերում) հիմնել երեխաների խնամքի պետական և համայնքային կենտրոններ, որոնք որոշ չափով կնպաստեն կանանց զբաղվածության խնդրի լուծմանը:
4. Աջակցել կանանց ձեռնարկատիրությանը՝ տրամադրելով արտոնյալ վարկեր և խորհրդատվություն՝ հատկապես ծառայությունների և SS ոլորտներում:
5. Ապահովել նվազագույն կենսաթոշակի չափի համապատասխանություն սպառողական զամբյուղին, որպեսզի տարեցները հարկադիր կերպով չշարունակեն աշխատել:
6. Այլ երկրների հաջողված փորձի հիման վրա մշակել հաշմանդամների զբաղվածության ապահովման համապատասխան ռազմավարություններ:

Հայաստանի աշխատաշուկայի 2014–2024 թթ. զարգացման շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած որոշակի դրական տեղաշարժերին և զբաղվածության մակարդակի ընդհանուր աճին, ոլորտում դեռևս առկա է խորքային կառուցվածքային անհամաչափություն: Ըստ այդմ՝ կարելի է ասել, որ գործող քաղաքականությունը չի ապահովում աշխատաշուկայի լիարժեք ներառականություն և կայունություն: Հետևաբար՝ աշխատաշուկայի կարգավորման ու զարգացման ռազմավարությունը պետք է ձևավորվի համակարգային մոտեցման հիման վրա: Առկա խնդիրների լուծման առանցքային ուղղություններն են կրթական համակարգի և աշխատաշուկայի պահանջների ներդաշնակեցումը, երիտասարդների և կանանց արդյունավետ ներառման ապահովումը, ինչպես նաև տարածաշրջանային զարգացման հավասարակշռված քաղաքականության վարումը: Միայն համապարփակ և նպատակային բարեփոխումների միջոցով հնարավոր կլինի ձևավորել մրցունակ և կայուն աշխատաշուկա, որը կնպաստի Հայաստանի սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետական բյուջեի հաշվետվություններ: ՀՀ ֆինանսների նախարարություն՝ minfin.am:
2. «ՀՀ աշխատաշուկա 2024»՝ staff.am-ի ամենամյա զեկույց, հեղինակ՝ staffmedia.am, 27.12.2024:
3. armstat.am՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ:
4. business.gov.nl՝ Նիդերլանդների կառավարության պաշտոնական տեղեկատվական պորտալ:
5. canada.ca՝ Կանադայի կառավարության պաշտոնական կայքէջ:
6. gov.am՝ ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջ:
7. minfin.am՝ ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջ:
8. mlsa.am՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջ:

Анжела АЙРАПЕТЯН
Магистрант таможенного администрирования, АГЭУ

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

ДИНАМИКА РАЗВИТИЯ РЫНКА ТРУДА И ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ ЗАНЯТОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Эффективное функционирование рынка труда является одним из ключевых условий социально-экономического развития каждой страны. Это не только отражает темпы экономического роста, но и формирует основы для повышения уровня жизни населения и обеспечения социальной стабильности. Рынок труда Республики Армения в течение последнего десятилетия претерпел сложные и многослойные изменения. Демографические сдвиги, миграционные потоки, глобальная экономическая неопределенность и последствия пандемии COVID-19 оказали существенное влияние на структуру рабочей силы, уровень занятости и социальную инклюзию.

Цель исследования – проанализировать основные тенденции рынка труда Армении за последних период, выделив структурные факторы, определяющие текущее состояние сферы. В статье также рассматривается эффективность государственных программ и формулируются предложения, направленные на стабилизацию рынка труда и расширение социально-экономической инклюзии.

Ключевые слова: *рынок труда, занятость, рабочая сила, государственная политика в области занятости*

Anzhela HAYRAPETYAN
Customs Administration Master's Student, ASUE

SOCIAL POLICY

DYNAMICS OF LABOR MARKET DEVELOPMENT AND ISSUES OF STATE EMPLOYMENT POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

The effective functioning of the labor market is one of the fundamental prerequisites for the socio-economic development of any country. It not only reflects the pace of economic growth but also lays the foundation for improving the population's living standards and ensuring social stability. Over the past decade, Armenia's labor market has undergone complex and multifaceted transformations: demographic shifts, migration flows, global economic uncertainty, and the impact of the COVID-19 pandemic have significantly affected the structure of the labor force, the level of employment, and social inclusion.

The aim of this study is to analyze the main trends of Armenia's labor market in recent years, highlighting the structural factors that define its current state. The paper also examines the effectiveness of government programs and provides recommendations aimed at stabilizing the labor market and enhancing socio-economic inclusion.

Keywords: *labor market, employment, labor force, state employment policy*